քը — յարաճուն ջարդեր քրիստոնեաների։ Իւրաքանչիւր յետագայ փորձ նախընթացի արիւնոտ հետքերը ջնջելու, մոռացնելու մի ճեռնարկ է։

Քեմալական Թիւրքիան իր նախորդներից յետ չի մնաց. մէկ միլիոն հայութեան արեան շառաչիւնը պէտք էր խլացնել քաղաքակիրթ աշխարհում։

Ինչո՞վ։

Սահմանադրութիւնն էլ չէր օգնի։

Դա խաղացուած ու անցած կատակերգութիւնն էր։ Հարկաւոր էր նոր բան, աշխարհը շշմեցնող ու ցնցող։

Եւ ահա հանրապետութիւն։

Ամենաարմատական յեղաշրջումն հասարակական, քաղաքական ու ընտանեկան կեանքի։

Փոյթ չէ, թէ թիւրք ժողովրդի մտայնութիւնը, նրա անհատական թէ համայնական բարոյականութեան զգացումը այստեղ նոյնն է, ինչ սուլթանների ու Երիտ. Թիւրքերի օրօք։ Փոյթ չէ, որ ֆէսի փոխարէն եւրոպական գլխարկ կրող խաժամուժը այսօր էլ նոյն եռանդով կողոպուտի, աւերածի ու ջարդի կը վազի, ինչպէս պատերազմի ընթացքին, եւ նրանից առաջ։

Փոյթ չէ...

Մուստաֆա Քեմալը հրամայեց, որ թիւրքը լինի «եւրոպացի» եւ նա եղաւ «եւրոպացի»։ Եւ մէկ միլիոն հայութեան արեան վրայ կեղծ հանրապետութեան ծիրանին փռուեց։ Եւ հայ ժողովրդի դարաւոր ճիգերի ու հանճարի պտուղները մնացին ծոյլ ու բարբարոս մի ցեղի հաճոյքի համար, այսպէս կոչուած «լքեալ գոյքերի, այգիների, արտերի, անդաստանների» թալանը շարունակւում է։

Քաղաքակրթութեան պատմութեան համար, սակայն հետաքրքիրը քեմալիզմը չէ, որքան Դաշնակից կառավարութիւնների ընթացքը դէպի մեր օրերի այս անօրինակ ախտաբանական երեւոյթը։ Այս վերաբերմունքն է, որ հայկական հարցը դարձնում է տիեզերական խղճմտանքի գործ։ Քեմալիզմը կը մնար պարզ հրոսակային մի շարժում,— ինչպէս այն որակեց Բալֆուր 1920 թուի դեկտեմբերին Ազգերի Ընկերակցութեան ժողովին,— եթէ չլինէր Դաշնակիցների ծածուկ կամ յայտնի պաշտպանութիւնն ու ամէն տեսակի օժանդակութիւնը։

Պատերազմի բարձր նպատակների ուրացումն էր, որ սնունդ ու զօրութիւն տուեց Մուստաֆա Քեմալին, որ կազմակերպեց նրա ոյժերը, ու շպրտեց նախ «դաշնակից Հայաստանի», ապա «դաշնակից Յունաստանի վերայ»։

Այդ նպատակնե՞րը...արժէ վերյուշել նրանց սերունդների դաստիարակութեան տեսակէտից։

Նախագահ Վիլսոն Միացեալ Նահանգների պատերազմ մտնելու առթիւ Սենատին ուղղած իր թղթում (2 ապրիլ, 1917) այսպէս էր սահմանում կռուի նպատակը։

«Մեր նպատակն է, ասում է առաքինի նախագահը, արդարութեան եւ իրաւունքի սկզբունքները պաշտպանել... մենք բախտաւոր ենք, որ պիտի կռուենք աշխարհի վերջնական խաղաղութեան համար. ազգերի ազատութեան համար...մեծ ու փոքր ազգերի իրաւունքի համար. նաեւ նրա համար, որ մարդիկ ամէն տեղ կարողանան ընտրել իրենց կենցաղի եւ լինելութեան եղանակը... Իրաւունքն աւելի թանկարժէք է, քան խաղաղութիւնը», եզրակացնում է Վիլսոն։

Այսպէս էր հասկանում պատերազմի նպատակը այս 20-րդ դարի վերջին մեծ մարդը — ազատութիւն ժողովուրդների, մեծ թէ փոքր, ինքնորոշման անկապտելի իրաւունք տիրապետուած ազգերին, եւ կռիւ՝ մինչեւ որ իրաւունքը յաղթանակի, որովհետեւ խաղաղութիւնը ոչինչ է եւ խոտելի է, երբ մարդկային արդար իրաւունքն է ոտնահարուած։

Դաշնակիցները, որոնց առջեւ Վիլսոն դրեց իր բարոյական պատգամները, համամիտ դտնուեցին Միացեալ Նահանգների նախագահի տեսակէտին։ Ազգերի Լիգա կազմելու առաջարկին Դաշնակիցները 1917 յունուարին պատասխանում են. «Դաշնակից պետութիւնները գիտակցում են, որ նրանք կռւում են ոչ եսական շահերի, այլ նախ եւ առաջ ազգերի անկախութեան պաշտպանութեան համար, իրաւունքի համար, արդարութեան համար». ապա անուն-անուն թուելով ազատագրուելիք ազգե-